

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



**Մարզկենտրոնը՝ ք. ԿԱՊԱՆ**

*Մարզի տարածաշրջանները՝*

Կապան  
Գորիս  
Միսիան  
Մեղրի

*Քաղաքները՝*

Կապան  
Գորիս  
Միսիան  
Մեղրի  
Ագարակ  
Քաջարան  
Դաստակերտ

## ՀՀ Սյունիքի մարզի քաղաքները

*(հունվարի 1-ի դրությամբ)*

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2006	2007	2008	2009	2010
Ագարակ	1995	385	4.8	4.8	4.8	4.9 <sup>◇</sup>	4.9
Գորիս	1924	236	23.2	23.2	23.1	23.0	23.0
Դաստակերտ	1995	226	0.3	0.3	0.3	0.3	0.3
Կապան	1938	301	45.6	45.5	45.5	45.5	45.5
Մեղրի	1984	373	4.8	4.8	4.8	4.8 <sup>◇</sup>	4.8
Սիսիան	1974	206	16.7	16.7	16.7	16.7	16.7
Քաջարան	1958	327	8.4	8.4	8.5	8.5	8.5

<b>Տարածքը</b>	<b>4506 քառ. կմ</b>
<b>ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը</b>	<b>15.1%</b>
<b>Քաղաքային համայնքներ</b>	<b>7</b>
<b>Գյուղական համայնքներ</b>	<b>102</b>
<b>Քաղաքներ</b>	<b>7</b>
<b>Գյուղեր</b>	<b>127</b>
<b>Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>152.9 հազ. մարդ</b>
<b>այդ թվում`</b>	
<b>քաղաքային</b>	<b>103.7 հազ. մարդ</b>
<b>գյուղական</b>	<b>49.2 հազ. մարդ</b>
<b>ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.</b>	<b>4.7%</b>
<b>Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը</b>	<b>67.8%</b>
<b>Գյուղատնտեսական նշանակության հողեր</b>	<b>333598 հա</b>
<b>այդ թվում` վարելահողեր</b>	<b>43790 հա</b>

**ՀՀ Սյունիքի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից` Նախիջևանին և արևելքից` Ադրբեջանին:

Օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են` գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր,

բազալտային հոււմք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

ՀՀ Սյունիքի մարզն ընդգրկում է պատմական Մեծ Հայքի հզորագույն նահանգի՝ Սյունիքի (Միսական) երբեմնի 12 գավառներից 6-ի տարածքները (Բաղք, Ձորք, Կովսական, Ծղուկ, Հաբանդ և Արևիք): Այժմ այդ տարածքները համապատասխանում են Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու տարածաշրջաններին:

ՀՀ ամենաբարձր լեռնանցքը **Մեղրու լեռնանցքն է** (2483 մ):

Հայտնի են Բաղաբերդն ու Որոտնաբերդը, Հալիձորի ամրոցը, Տաթևի և Որոտնա վանքերը: Բնական հուշարձաններից են Գորիսի, Խնձորեսկի «բուրգերն» ու այրերը, Շաքիի ջրվեժը, Որոտանի ու Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը»:

900 տարի առաջ Տաթևի վանքում հիմնվել է համալսարան, որտեղ ուսումնասիրվել է աստղագիտություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն և օտար լեզուներ:

Կապան քաղաքից հարավ՝ Ծավ գետի կիրճում է գտնվում աշխարհի ամենամեծ բնական ստիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է 60 հա տարածություն (ծառերի տարիքը հաշվվում է հարյուրամյակներով): Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 40-45 մ-ի:

Հոգևոր-մշակութային ավանդույթներով հարուստ Կապան քաղաքում 2001թ. դեկտեմբերի 1-ին իր դռները բացեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, իսկ Գարեգին Նժդեհի ծննդյան 115 ամյակի կապակցությամբ կառուցվեց Գ.Նժդեհի հուշահամալիրը:

Քաղաքից 4 կմ հեռու, Ողջի գետի աջ ափին է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով գեղատեսիլ «Շիկահողի» պետական արգելոցը:

Ողջի գետի անտառածածկ կիրճում շատ են հանքային աղբյուրները:

Կիրճի եզրին կանգուն է մնացել Բաղաբերդ հինավուրց ամրոցը (IV դար):

Քաջարան քաղաքի շրջակայքը հարուստ է քաղցրահամ ու հանքային աղբյուրներով:

Ծովի մակերևույթից 3250մ բարձրության վրա փոված Կապույտ լիճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան (3905 մ) հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին: Սիսիանից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Վաղատնիում է գտնվում Որոտնավանքը՝ X-XII դարերի ճարտարապետության մի հետաքրքիր ստեղծագործություն, իսկ Աղիտում՝ XII դարի յուրատեսակ դամբարանային հուշարձանը: Միսիան քաղաքի շրջակայքում գտնվում է նեոլիտի ժամանակաշրջանի դամբարանաբլուր՝ Խոշում Դաշը, որը նախնադարյան մարդու կացարան է:

Սյունիքի իշխանանիստ կենտրոնը սկզբնական շրջանում եղել է Ծղուկ գավառի Շաղատ գուղաքաղաքը, IX դարում՝ Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաքը, X դարի կեսերից սկսած՝ Կապան քաղաքը:

Պարսկական գավթիչների լծի դեմ XVIII դարում հայերի մղած ազատագրական պայքարում մեծ դեր է խաղացել Սյունիքի մելիքական տոհմի ներկայացուցիչ Իսրայել Օրին, որը երկրի ազատագրության գաղափարը համահայկական շրջաններից գատ, ներկայացրել է նաև եվրոպական և ռուսական արքունիքներում:

1720-ական թվականներին Դավիթ Բեկի գլխավորությամբ, «Սյունյաց աշխարհ»-ն ազատագրվում է մահմեդական տիրապետության լծից (1727թ. տեղի ունեցած Հալիձորի ճակատամարտում Դավիթ Բեկի զորքը ջախջախում է թշնամու զորաբանակները):

XIX դարի վերջին Սյունյաց լեռներից արևելք ընկած գավառները ներառվում են Ելիզավետպոլի նահանգի մեջ, իսկ 1921թ. օգոստոսի 31-ին՝ Կապանի, Գորիսի, Միսիանի և Մեղրու գավառակներից կազմավորվում է Զանգեզուրի գավառը՝ Գորիս կենտրոնով:

1930թ. նախկին գավառակների փոխարեն կազմավորվում են վարչական 4 շրջաններ և տարածաշրջանը տնտեսական և մշակութային մեծ վերելք է ապրում:

### **Տնտեսությունը**

**ՀՀ Սյունիքի մարզը**, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

2009թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 14.1 %,
- գյուղատնտեսություն՝ 6.1 %,
- շինարարություն՝ 3.8 %,
- մանրածախ առևտուր՝ 1.0 %,
- ծառայություններ՝ 1.0%:

**Մարզի արդյունաբերության** հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2009թ.-ին շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

### **Կապան քաղաքը**

**Կապան քաղաքը** (2009թ. տարեվերջ՝ 45.5 հազ. բնակիչ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), հեռավորությունը Երևանից 301 կմ: Հանրապետության խոշոր արդյունաբերական քաղաքներից մեկն է:

1846թ.-ից մինչև խորհրդային կարգերը պղնձահանքերը շահագործվել են մասնավոր ձեռնարկատերերի կողմից (ֆրանսիական արդյունաբերական և մետաղագործական ընկերություններ):

**Տնտեսության** առաջատար ճյուղն **արդյունաբերությունն է**, ընդհանուր ծավալում գերակշռողը **հանքարդյունաբերությունն է**, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը:

Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև **մշակող արդյունաբերությունը** (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

### **Քաջարան քաղաքը**

**Քաջարան քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 8.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 327 կմ հեռավորության վրա) հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

**Տնտեսության** հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

### **Գորիս քաղաքը**

**Գորիս քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 23.0 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1870թ.՝ որպես Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառի կենտրոն: տնվում է Երևան քաղաքից 236 կմ հեռավորության վրա:

Վարարակն գետը հին ու նոր քաղաքների «սահմանն» է: Գետի աջ ափին կանաչապատ քաղաքն է, ձախ ափին՝ քարե բուրգերի ու հրաբխային ապարների պուրների լաբիրինթոսը:

Տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները :

### **Միսիան քաղաք**

**Միսիան քաղաքի** (2009թ. տարեվերջին՝ 16.7 հազ. բնակիչ): Գտնվում է Երևան քաղաքից 206 կմ հեռավորության վրա:

Տնտեսության ծավալում գերակշռողը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

### **Դաստակերտ քաղաք**

**Դաստակերտ քաղաքում** (2009թ. տարեվերջին՝ 0.3 հազ. բնակիչ): Գտնվում է Երևանից 226 կմ հեռավորության վրա: Ներկայումս աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

### **Մեղրի քաղաք**

**Մեղրի քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 4.8 հազ. բնակիչ) յուրահատուկ «կենդանի» թանգարան է, քաղաքի թաղամասերը վեր են մագլցում քարոտ լանջերով: Գտնվում է Երևանից 373 կմ հեռավորության վրա:

Մեղրու ամրոցի մասին առաջին հիշատակությունը վերաբերվում է 1083թ.:

Քաղաքում պահպանվել են XVII դարում կառուցված եկեղեցիներ:

Տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

### Ագարակ քաղաք

**Ագարակ քաղաքի** (2008 թ. տարեվերջին՝ 4.9 հազ. բնակիչ) տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում է գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսային կետերը: Գտնվում է Երևանից 385 կմ հեռավորության վրա:

Տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է:

Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ:

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	
		2009թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ
Կապան	ք. Կապան	45544	45488
Քաջարան	ք. Քաջարան	8489	8498
Գորիս	ք. Գորիս	23019	23022
Մեղրի	ք. Մեղրի	4780	4775
Ագարակ	ք. Ագարակ	4872	4881
Սիսիան	ք. Սիսիան	16680	16735
Դաստակերտ	ք. Դաստակերտ	301	303

\* ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	Ագարակ		180	183
2	Ալվանք		357	343
3	Ախլաթյան		497	459
4	Ակներ		1325	1338
5	Աղիտու		304	304
6	Աղվանի		87	88
7	Աճանան		156	154
8	Անգեղակոթ		2054	2057
9	Անտառաշատ		120	120
10	Աշոտավան		644	647
11	Առաջաձոր		171	164
12	Արավուս		227	227
13	Արծվանիկ		580	578
14	Արևիս		140	140
15	Բայաք		221	213
16	Բարձրավան		177	175
17	Բնունիս		189	188
18	Բոնակոթ		2385	2315
19	Գեղանուշ	•Գեղանուշ •Գոմարան	293	286
20	Գեղի	•Գեղի •Գեղավանք •Կարդ •Կիցք (Քիրս) •Վերին Գեղավանք (Փիրլու) •Քարուտ (Քուրուտ)	136	138
21	Գետաթաղ		220	220
22	Գորայք		579	580
23	Գուղեմնիս		40	39
24	Դավիթ Բեկ		814	813
25	Դարբաս	•Դարբաս •Շամբ	1261	1234
26	Եղեգ		107	113
27	Եղվարդ		273	272
28	Թանահատ		77	76
29	Թասիկ		295	291
30	Իշխանասար		266	271
31	Լեհվազ		587	605
32	Լեռնաձոր	•Լեռնաձոր •Կավճուտ •Մուսալլամ •Ներքին Գիրաթաղ •Վերին Գիրաթաղ	530	547

\*\* ՀՀ Սյունիքի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:



	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
33	Լիճք		160	156
34	Լձեն		177	178
35	Լոր		419	420
36	Խղրանց		58	55
37	Խնածախ		1080	1073
38	Խնձորեսկ		2196	2260
39	Խոզնավար		404	407
40	Խոտ		1031	1079
41	Ծավ	•Ծավ •Շիշկերտ	368	351
42	Ծղուկ		453	451
43	Կաղնուտ		108	109
44	Կարճևան		297	292
45	Կոռնիձոր		1310	1326
46	Կուրիս		68	61
47	Հայիձոր		634	707
48	Հարթաշեն		707	717
49	Հարժիս		1014	1014
50	Հացավան		278	280
51	Ջորաստան		64	61
52	Ճակատեն		136	137
53	Մուցք		375	375
54	Ներքին Խնձորեսկ		317	321
55	Ներքին Խոտանան		75	70
56	Ներքին Հանդ		78	78
57	Նժդեհ	•Նժդեհ(Սոֆլու) •Ցղունի	202	188
58	Նորաշենիկ		113	118
59	Նորավան		522	524
60	Նոր Աստղաբերդ	•Նոր Աստղաբերդ (Փայահան) •Աջաբաջ •Գետիշեն (Զայքենդ) •Ոչեթի (Հաջաթին)	79	93
61	Նոնաձոր		146	140
62	Շաղատ		1204	1219
63	Շաքի		1609	1611
64	Շենաթաղ		420	422
65	Շիկահող		178	189
66	Շինուհայր		2895	2865
67	Շվանիձոր		308	306
68	Շրվենանց		67	76
69	Շուռնուխ	•Շուռնուխ •Աղբուլաղ •Վանանդ (Ղուրդղուլաղ) •Ջորակ (Փայտամշակման գ.կ.)	204	224
70	Որոտան (Գորիսի տարածաշրջան)		305	307
71	Որոտան (Միսիանի տարածաշրջան)		302	282
72	Չափնի		59	56
73	Սալվարդ		401	396
74	Սառնակունք		548	519

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
75	Սյունիք	•Սյունիք •Բարգուշատ (Ներքին Գյողաքլու) •Դիցմայրի •Խորձոր •Սգնակ(Արզնակ)	1300	1294
76	Սպանդարյան		484	486
77	Սվարանց		322	270
78	Սրաշեն		91	91
79	Սևաքար		103	102
80	Վահրավար		53	47
81	Վաղատին		751	756
82	Վաղատուր		474	476
83	Վանեք		73	71
84	Վարդանիձոր	•Վարդանիձոր •Այգեձոր •Թխկուտ (Մարալգամի)	280	292
85	Վարդավանք		104	91
86	Վերին Խոտանան		203	199
87	Վերիշեն		2521	2532
88	Տաթև		910	892
89	Տանձավեր		214	212
90	Տանձատափ		99	100
91	Տաշտուն		132	134
92	Տավրուս		90	96
93	Տեղ		2515	2520
94	Տոլորս		450	450
95	Տորունիք		163	138
96	Ուժանիս		86	87
97	Ույծ		582	586
98	Քաշունի		27	27
99	Քաջարան		204	212
100	Քարահունջ		1304	1303
101	Քարաշեն		640	640
102	Օխտար		102	87

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5038	4962
Ծնվածներ, մարդ	115	53	62
Մահացածներ, մարդ	87	42	45
Ամուսնություններ	47	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	23.5	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	232	114	119
հանրակրթական	1141	564	577
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	143	102	41
նախնական մասնագիտական (արհեստագործական)	20	4	16
միջին մասնագիտական	85	53	32
բարձրագույն մասնագիտական	162	86	76
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	45620	...	...
Մարզիկներ, մարդ	125	41	84
Զբաղվածներ, մարդ	3235	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	164	133	31
բժիշկներ	20	...	...
միջին բուժանձնակազմ	54	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	453	319	134
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1675	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	325	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	35847	...	...
թատրոն	1075	...	...
համերգ	-	-	-
թանգարան	339	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	32	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	13	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	10	X	X
առանձնապես ծանր	1	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: